

Թէպէտ ռամկին բերանը աղաւաղ ևս երևնայ, բազմութեամբ թաթար և ռուս բառերու. այլ հիմը և արմատը գեղեցիկ է և վայելուչ և քաղցրահնչիւն քան զամենայն գաւառական բարբառ հայկական լեզուիս: Եթէ հայագէտ մի ուշադրութեամբ միտ դնէ, կրթեալ և հայրենագէտ Նախիջևանցւոց երիտասարդաց և օրիորդաց, որք հայկական տառերն նագանօք և փափուկ հնչելով կը խօսին իրենց անցիկ լեզուն, թօթափելով եկամուտ խորթաձայն օտարոտի բառերը, կրնայ ստուգել զուրցածիս ճշմարտութիւնը:

Ոմանք նոր հայագէտք, իրենց նորահնար լեզուով պանծացեալ համարձակ կը գրեն պախարակելով քանի մի օտարամուտ բառք Նախիջևանցւոց բարբառոյն՝ ի բերան սերտած. այլ լեզուաց կանոնը և կազմը քննողին յայտնի է գեղեցկութիւնը Անեցւոց բարբառոյն: Բացատրութեան անկարօտ ճշմարտութիւն մի է, որ որչափ ազգ մի կրթուի և յղկուի՝ նոյնչափ այն ազգին լեզուն մատենագրութեամբ կը կոկուի: Նախիջևանցիք և Ղրիմեցիք գերահռչակն Անույ Բագրատունի ոստանիկ Ժողովրդեան մասն են. ինչպէս քաղաքն Անի աննըման է գեղեցկութեամբ, այլոց քաղաքաց աշխարհիս մերոյ, նոյնպէս կը վայլէր որ լինի նորա Ժողովրդոց բարբառը: Թաթարաց լուծը և այլ օտար ազգաց ազդեցութիւնը եթէ տակաւ Նախիջևանու բարբառէն վերցուի մաքրուի, անշուշտ այդ բարբառը ամենայն աշխարհիկ բարբառէ աւելի քաղցրահնչիւն և ճկուն պիտի հանդիսանայ: Նախիջևանցիք այդ բանին դրսէն վարժապետաց կամ հեղինակութեանց կարօտութիւն չունին. շատ գեղեցիկ, միանգամայն ախորժալուր հնչմամբ կը խօ-